ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆԱ-ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Պետական կառավարչական հիմնարկների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի ժ/ ենթակետի և Հաայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի

կարգադրում եմ՝

1. Մարզպետարանի աշխատակազմում գույքագրում անցկացնելու և հանձնաընդունելություն կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

   Սահակյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ, նախագահ

   Զոհրաբյան Ա. – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի վարիչ

   Օհանյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՏՍԳՀ բաժնի վարիչ

   Բաղեյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ

   Օհանյան Ս.- մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսա-գիտական բաժնի գլխավոր մասնագետ

   Սաֆարյան Մ. – մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի վարիչ

2. Հանձնաժողովին՝

   1) գույքագրումը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ նոյեմբերի 18-ի թիվ 45 արձանագրային որոշմամբ հաստատված ,,ՀՀ պետական կառավարման մարմնի աշխատակազմում գույքագրման օրինակելի կարգի,, պահանջներով և գույքագրման արդյունքները մինչև ս/թ հունվարի 30-ը ներկայացնել մարզպետին.

   2)գույքագրման արդյունքներով կազմել հանձնաընդունելության ակտ /հանձնող՝ մարզպետարանի աշխատակազմի նախկին ղեկավար Վ.Բազիկյան, ընդունող՝ մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ս.Խլղաթյան/:

   3. Կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին:

   4. Սույն կարգադրությունը ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն.ՊՈՂՈՍՅԱՆ